ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2023-2025ԹԹ. ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Վաղարշապատ համայնքի 2023-2025թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հանդիսանում է ֆինանսական փաստաթուղթ, որով սահմանվում է 2023-2025թթ. համայնքի տարեկան բյուջեն՝ եկամուտներն ու ծախսերը: Ծրագրում ներկայացված է Վաղարշապատ համայնքի՝ հաջորդ երեք տարիների բյուջեի վարչական և ֆոնդային մասերի եկամուտները՝ ըստ ձևավորման աղբյուրների, միջնաժամկետ ծախսերի ծրագրի վարչական և ֆոնդային մասերի տարեկան հատկացումները՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, միջնաժամկետ ծախսերի ծրագրի վարչական և ֆոնդային մասերի հատկացումների կատարումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների, միջնաժամկետ ծախսերի ծրագրերի վարչական և ֆոնդային մասերի տարեկան հատկացումները ըստ՝ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի, դասերի և տնտեսագիտական դասակարգման հոդվածների:

Համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հնարավորություն կտա առավել հստակ և հեռանկարային մշակել ծախսերի քաղաքականությունը: Ծրագիրը հստակեցնում է եռամյա ժամանակահատվածում համայնքի ծախսային քաղաքականությունը տարեկան կտրվածքով՝ հնարավորություն ընձեռնելով համայնքի համար միջնաժամկետ հատվածում կառավարելու համայնքի ֆինանսական ռեսուրսները և ստեղծելու պատշաճ ծրագրային հիմքեր առաջիկա տարվա համայնքի բյուջեի նախագծի մշակման համար: